ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

«ԿՈՏԱՅՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

Հաստատում եմ՝ _____ Ռ. Մարտիրոսյան

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի

կառավարման խորհրդի նախագահ

«16» հեկտեմբեր 2018 թվական

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ԴԱՍԱԽՈՍԻ ԵՎ ՆՐԱ ՎԱՐԱԾ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ

Քննարկվել և ընդունվել է ԿՏՊՔ-ի

ուսումնամեթոդական խորհրդի կողմից

«24» նոյեմբեր 2018թ.

ՀՐԱԶԴԱՆ 2018

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Ուսանողների կողմից դասախոսների գնահատման ձևաչափը հանդիսանում է դասախոսի կողմից անկացրած դասընթացը և կրթական միջավայրը ուսանողների տեսանկյունից վերլուծելու և գնահատելու միջոց, ինչպես նաև դասախոսի կրթական գործունեության բարելավմանը խոչընդոտող գործոնները բացահայտելու հնարավորություն: Գնահատումն իրականացվում է դասախոսի վարած դասընթացի, կրթական միջավայրի բարելավման համար, սոցիալական հարցման միջոցով:

1.2. Ուսանողների կողմից ԿՏՊՔ-ի դասախոսների և նրանց վարած դասընթացի գնահատումն իրականացվում է սույն ընթացակարգի համաձայն:

1.3. Սույն ընթացակարգը հաստատում և դրա մեջ փոփոխություններ ու լրացումներ է կատարում հաստատության ուսումնամեթոդական խորհուրդը:

2. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

2.1. Գնահատման իրականացման նպատակն է՝

- *Նպաստել ուսանող-դասախոս համագործակցությանը,*
- *Խթանել դասախոսի մասնագիտական աճը՝ առկա բացթողումները շտկելու նպատակով*
- *Շարունակաբար կատարելագործել ԿՏՊՔ-ի դասախոսների աշխատանքների որակը:*

2.2. Գնահատման կանոնավոր կիրառումը թույլ կտա բարձրացնել դասախոսի մասնագիտական պատրաստվածության մակարդակը, մանկավարժական հմտությունների որակը:

3. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

3.1. Գնահատումը ներառում է չափանիշներ, որոնց միջոցով ուսանողները հնարավորություն են ունենում վեր հանել դասախոսների մասնագիտական պատրաստվածության, մանկավարժական որակների մասին իրենց ընկալումները: Այդ չափանիշներն են՝

- Դասախոսի կողմից առարկայական ծրագրի ներկայացումն ու իրականացումը,
- Դասախոսի կողմից կիրառվող գնահատման մեխանիզմները,
- Դասախոսի կողմից մատուցվող նյութի բովանդակությունը,
- Ուսանողների կողմից դասախոսի մատուցած նյութին արձագանքելու հնարավորությունը,
- Դասախոսի՝ դասավանդման հմտությունը,
- Դասախոսի պ՝արտաճանաչությունը,
- Դասախոսի կողմից ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը,
- Ուսանողների մասնակցության ապահովումը դասին,

4. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

4.1. Գնահատումն իրականացվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտից հետո:

4.3. Գնահատումն իրականացվում է հարցումների անցկացման կանոնակարգին համապատասխան:

4.4. Գնահատման տվյալների գաղտնիությունը և անանունությունը վերահսկվում է ԿՏՊՔ-ի որակի ներքին ապահովման և կարիերայի կենտրոնների կողմից:

5. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

5.1. Գնահատման արդյունքները վերլուծության են ենթարկվում որակի ներքին ապահովման կենտրոնի կողմից:

5.2.Ուսանողական հարցման արդյունքները ամփոփվում և քննարկվում են համապատասխան ամբիոնների նիստերում: Քննարկումների արդյունքում մշակվում են համապատասխան առաջարկություններ և երաշխավորություններ՝ ուղղված դասախոսի դասավանդման որակի բարելավմանը:

5.3 Գնահատման արդյունքները պահպանվում են քոլեջում: Գնահատման անհատական արդյունքները ներկայացվում են միայն տվյալ դասախոսի հետ անհատական քննարկման շրջանակներում՝ ամբիոնի վարիչի և ուսումնական մասի ղեկավարի մասնակցությամբ: Գնահատման տվյալները ընդհանրացված կարգով կարող են դառնալ խմբային քննարկման առարկա՝ մանկավարժական խորհրդի նիստերի ժամանակ՝ նպատակ ունենալով բարելավելու դասախոսների մասնագիտական և մանկավարժական հմտություններն ու կարողությունները:

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի տնօրեն Գ. Գևորգյան